

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի

Հարցաշարերի պատասխաններ

IX դասարան

1. Պարույր Մսակը մեր գրականության, «Քուռկիկ Ջալալին է», որ իր հրեղեն շնչով ապրեցրեց մեր պոեզիան, դարձավ նրա անքննելի մեծերից մեկը, ով իր հայրենիքը սիրեց «կարևեր սիրով»՝

Դու՛ հազարամյա իմ ազգանունը...

Ես այնպես ապրել կարողանայի,

Որ ինձ ազգանուն քախշելուդ համար

Դու երբևիցե անհարմար չգգաս...

Իսկ հայրենիքը նրան ազգանուն քախշելու համար չափազանց հպարտ է, հարուստ ու անկողոպտելի:

Մսակի համար հայրենիքը հավասար է պատմության՝ անցյալ, ներկա ու գալիք:

Հայրենիքի տառապանքը շաղաղվել է մաքառումով ու պայքարով, լույսի ու

ճշմարտության ձգտումներով: «Քաղցրանուն» ու «Բարձրանուն» հայրենիքը մերթ

«խաղողի խչմարված վազ» է, մերթ վշտերի ծովածավալ հեղեղ, մերթ «բարդենի

սաղարթաշատ», հետո՝ ջրաղաց ու հորովել, գութանի արծաթ խոփ. այս

բնութագրումները նրա արարչական ոգին են փառաբանում, բայց այս բոլորն ունենալու

համար հայրենիքը նետ, նիզակ, մկունդ է դարձել, ծխեցրել է հայրենի ծուխը, դրա

համար էլ «ալեհեր ու ջահել» է: Բանաստեղծության երկրորդ մասում բանաստեղծը

փառաբանում է հացի արարումը, հայոց արբեցնող գինու կենսասիրությունը և

հպարտ է «Արդարության ահեղ ատյան, սրի պատյան, սիրո մատյան- միշտ հի՛ն ու

նո՛ր իր Հայաստանով», որ աշխարհի հների հետ է գրուցում և գալիքին է պարզել իր

արդար հաղթանակի դրոշմը:

Բանաստեղծությունը աչքի է ընկնում անթերի մակդիրներով, համեմատություններով,

որոնք լցված են հայաշխարհիկ գույներով ու ձայներով:

Եվ պատահական չէ, որ այս բանաստեղծությամբ է բացվում «Օուխ ծխանի» շարքը:

Շարքն ամբողջությամբ անկեղծ որդու զրույց է իրեն ծնող հայրենիքի ու ժողովրդի հետ,

և հպարտ է նա իր հայրենիքի փառահեղ պատմությամբ...

2. Ամենայն հայոց բանաստեղծը Հովհաննես Թումանյանն է: Այս բնորոշումը

բանաստեղծն ինքն իրեն տվել է ի պատասխան ամենայն հայոց վեհափառի, երբ Վեհը

բանաստեղծի՝ որբերին վեհարանում պատսպարելու պատճառով, նրան հիշեցրել է

իր ով լինելը: Ակամա տրված այս գնահատականը ամենաճշմարիտն է բնութագրում

բանաստեղծին, որովհետև նա բոլորիս բանաստեղծն է՝ մանուկների, պատանիների, հասուն մարդկանց, ծերունիների:

«Սասունցի Դավիթ» պոեմը Թումանյանը գրել է 1902-ին փոքր տարիքի ընթերցողների համար, բայց այն իր կատարյալ ձևի մեջ հիացնում է բոլոր տարիքի ընթերցողներին:

Բանաստեղծը հրաշալի է բնութագրել մեր ժողովրդի էպոսը. «Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխարհի առաջ»:

Պոեմում բանաստեղծը անդրադարձել է հայրենասիրության, մեծահոգության, բարության, ժողովրդասիրության, ներողամտության հարցերին: Հայրենիքը էպոսի բոլոր հերոսների համար սրբություն է. Սանասարից ու Բաղդասարից Մեծ Մհերին, այնուհետև Դավթին, փոքր Մհերին են անցնում վերոնշյալ բոլոր հասկությունները: Նրանք թշնամուց պաշտպանում են իրենց հայրենիքը, բայց ոչ մի ուրիշ հայրենիքի նկատմամբ զավթողական պատերազմ չեն մղում, չեն սպանում ուժով կռվի դաշտ բերված օտար զինվորին, չեն մոռանում իրենց արված երախտիքը, երախտագիտությամբ են ընդունում թշնամու մոր և քրոջ խնդրանքը, քանի որ նրանք պահել ու սնուցել են մեր ժողովրդի ամենասիրելի հերոսին՝ Դավթին: Սասունցի Դավթի մեջ մարմնավորվել են հայ ժողովրդին հատուկ բոլոր հրաշալի գծերը, և Թումանյանն իր հանձարով հասել է ժողովրդական էպոսի անգերազանցելի իմաստությանը՝ ապրել հողագործի արդար աշխատանքով, մշակել հողը, բարիք ստեղծել, քանի որ «չեն աշխարհի վեր գութնին է»:

Ձանձրացե՛լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կյանքից,
Թե՛՞ զգվել եք ձեր հանդ ու դաշտ
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Օտարներին նա ցույց է տալիս հետդարձի ճանապարհը և պատվիրում, այլևս երբեք չհարձակվել ուրիշների վրա:

Իր հերոսական վարքագծով Դավիթը մեկընդմիջտ մերժում է պատերազմը և հնչեցնում խաղաղ ու գեղեցիկ կյանքի օրհներգը:

3. Հայ միջնադարյան գրականության հանձարեղ բանաստեղծ, փիլիսոփա, շարականագիր Ներսես Շնորհալին, որ կոչվել է նաև Ներսես Երզնցող, ծնվել է Կիլիկյայի Տլուք գավառի Ծովք ամրոցում՝ իշխան Ապիրատ Պահլավունու ընտանիքում: Նա ծոռն էր նշանավոր իմաստուն Գրիգոր Մագիստրոսի: Հիմնավոր կրթություն է ստացել Կարմիր վանքի դպրոցում: Նրա եղբայրը՝ Գրիգոր Պահլավունին, 20 տարեկանում օծվել է Հայոց կաթողիկոս: Նա աստվածային երազ է տեսնում, երազում նրան ասում են, որ եղբայրը պետք է կոչվի Շնորհալի: Միջնադարում այս կոչմանն արժանացել է միայն Ներսես Շնորհալին, որ կիլիկյան հայերենում հավասար է եղել «հանձար» բառին: Եղբոր մահից հետո՝ 1166-ին, Ներսես Շնորհալին օծվել է Հայոց

կաթողիկուս և մինչև իր մահը՝ 1173 թվականը, հովվապետել է Կիլիկյայի Հռոմկլա ամրոցում: Այնտեղ էլ ամփոփվել է նրա աճյունը և դարձել սրբատեղի: Հայ եկեղեցին Շնորհալուն դասել է սրբերի շարքը: Շնորհալին բազմաժանր բանաստեղծ է, գրել է տաղեր, բանաստեղծություններ, երգաշարեր, հանելուկներ, պոեմներ: Գրել է բազմաթիվ շարականներ, որոնք այսօր էլ երգվում են եկեղեցական տոնակատարությունների ժամանակ: Շնորհալին գրել է առաջին Այբբենարանը, որտեղ զետեղել է ուսուցողական ոտանավորներ: Այդ ոտանավորները իրենց նախօրինակը չեն ունեցել հայ գրականության մեջ. դրանք մատաղ սերնդին դաստիարակել են ազգային արժանապատվության ոգով, հայրենասիրությամբ:

Նա առաջին անգամ գրական մշակման է ենթարկել բանահյուսական հնագույն ժանրերից մեկը՝ հանելուկը, և դա զետեղել է դասագրքերում՝ նպաստելով երեխաների մտքի ճկունությանն ու զարգացմանը:

Շնորհալին առաջին անգամ օգտագործել է դիմառությունը՝ որպես գրական հնարանք: «Ողբ Եղեսիո» պոեմը Շնորհալու ստեղծագործության գլուխգործոցն է, անմահ կոթող մեր գրականության մեջ:

Սակայն Շնորհալին առավել հայտնի է իր շարականներով, որոնք երգվում են եկեղեցական տոնակատարությունների ժամանակ: Շարականները ամփոփված են «Շարակնոց» գրքում: «Առաւոտ լուսոյ» շարականը որևէ տոնի առիթով չի ստեղծվել և ոչ թե «Շարակնոց»-ում է զետեղված, այլ «Ժամագրքում»: Այն իր տեսակով եզակի ստեղծագործություն է՝ գրված ծայրակապով՝ հայոց տառանուններով: Այս երգը կոչվում է նաև «Երգ աղոթական» և նվիրված է Սուրբ Երրորդությանը՝ Հայր Աստված, Հիսուս Քրիստոս և Սուրբ Հոգի: Բանաստեղծական յուրաքանչյուր տուն կազմված է երեք տողից, որոնք հերթականությամբ ներկայացնում են հայոց տառերը՝ Ա-Ք

Աստված-Քրիստոս: Այն աղաչական երգ է. բանաստեղծը հայոց այբուբենի միջոցով արտահայտել է Աստծու գթությամբ մարդկային մեղքերից սրբագործվելու գաղափարը: Այստեղ Շնորհալին մոտենում է իր մեծ նախորդին՝ Գրիգոր Նարեկացուն: Շարականը մեղմ ու հոգեպարար երաժշտությամբ է երգվում և մեզ պարուրում աստվածային լույսով ու հեզությամբ:

4. Հայ գրականության ամենասիրելի բանաստեղծներից է Վահան Տերյանը՝ աշնան ու թախծի երգիչը, որ գրականություն մտավ շնորհալից ու միանգամից դարձավ ընթերցողի մտերիմն ու հոգեկիցը: 1908-ին լույս տեսավ Տերյանի առաջին գրքույկը՝ «Մթնշաղի անուրջներ»-ը, և միանգամից «օղբ լցվեց Տերյանով»: Նրա մուտքը ողջունեցին Թումանյանն ու Իսահակյանը՝ հայ գրականության փառքերը: 1913-1916 թվականներին Տերյանը գրեց իր հրաշալի շարքերից մեկը՝ «Երկիր Նաիրին» (ի դեպ Տերյանն առաջինն էր, որ գրեց շարքերով): Եղիշե Չարենցը այս շարքը անվանեց «Նաիրյան խոսքերի թանգարան»: Պարտվել էր ռուսական 1-ին հեղափոխությունը, ի դերն էին ելել ազատության ու հավասարության համար պայքարող ժողովրդի հույսերը, բանտերը լիքն էին հեղափոխականներով: Հայաստանը, հատկապես

Արևմտյան Հայաստանը, խեղդվում էր արյան մեջ, օրհասական ժամանակներ էին, օդում զգացվում էր չարագուշակ արյունահեղության տտիպ համր: Տերյանը մի առանձին խանդով էր լծվել հայրենիքի ու ժողովրդի փրկության գործին: Իր ընկերների հետ նա շրջում էր գյուղերում, արթնացնում ժողովրդի պայքարի ոգին: Հենց այս դժվարին, անելանելի պայմաններում էլ նա հղացավ իր սքանչելիքը՝ «Երկիր Նաիրի» շարքը: Նաիրին հին Հայաստանն է՝ մեր նվիրական հայրենիքը, երբեմնի շեն ու շքեղ մեր դրախտավայրը: Տերյանը սարսափում էր Հայաստանի գլխին կախված աղետից, նա իրեն համեմատում է Ողիսեսի հետ, ով թափառումներից վերստին վերադառնում է իր հայրենի ուստանը: Տերյանը գալիս է երգելու մեր ժողովրդի երբեմնի փառքը և համոզելու, որ «Խաչվածին մահ չկա», որ բոլոր արհավիրքներից Հայաստանը փրկվել է իր մշակույթի, իր անվախճան կառուցման, իր աննկուն կամքի շնորհիվ և համոզված է՝ «Արևի պես, երկիր իմ, կհասնես վառման», «Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն, այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն»: Շարքում ներկայացնում է ազգային արժանապատվության աննկուն ոգին, պայքարի կոչում իր երկիրը՝

Ժամ է, ել նորից, իմ ծիրանավառ,
Զրահավորվիր խանդով խնորագին,
Վառի՛ր երկունքի գիշերում խավար,
Հրով մկրտված Նաիրյան ոգին...

Բանաստեղծության ընտրությունն ու վերլուծությունը մնում է մասնակցին:

Գնահատման չափանիշներ

IX դասարան

1-ին հարց՝ ենթահարց 1. 3 միավոր,
ենթահարց 2. 2 միավոր:

2-րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,
ենթահարց 2. 1 միավոր,
ենթահարց 3. 3 միավոր:

3-րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,
ենթահարց 2. 1 միավոր,
ենթահարց 3. 1 միավոր,
ենթահարց 4. 1 միավոր,
ենթահարց 5. 1 միավոր:

4-րդ հարց՝ ենթահարց 1. 1 միավոր,
ենթահարց 2. 2 միավոր,
ենթահարց 3. 2 միավոր:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան